

ԷՎԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԵՐԼԱՆԻ «ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 20, հեռ. 28 – 54 – 76, ֆաքս 28 – 54 – 68

էլ. փոստ info @ armchampagne. am

N 20 07.08.2009թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ հասարակ, անվանական

արժեթղթերի քանակը՝ 222183 հատ

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ 4000 ՀՀ դրամ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

<u>Յ. Իսկաջյան</u>	<u>Գլխավոր հաշվապահ</u>	_____	<u>07.08.2009թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<u>Գ. Մինասյան</u>	<u>Տնտեսագետ</u>	_____	<u>07.08.2009թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<u>Ս. Հակոբյան</u>	<u>Իրավախորհրդատու</u>	_____	<u>07.08.2009թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են (ստորագրությունները հավաստվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման այլ իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

<u>Ֆ. Հակոբյան</u>	<u>Գործադիր տնօրեն</u>	_____	<u>07.08.2009թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

«07» օգոստոս 2009թ.

Կ.Տ.

Հաշվետվությունն էական փաստերի և տեղեկությունների

վերաբերյալ

Սույնով Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ն տեղեկացնում է առ այն, որ բանակցությունների արդյունքում պայմանագիր է կնքել Բելառուսի Հանրապետությունում Վիտեբսկ քաղաքում գտնվող «Վիտեբսկի լիկյորների և օղիների գործարան» ՅՈՒԶ – ի (ԹՕՐ՝ “Абсолютные спирты”) հետ, ըստ որի կողմերի միջև կնքվել է ակտիվային խմիչքների մատակարարման պայմանագիր: Ըստ պայմանագրի Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ն պատրաստվում է Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծել նշված ընկերության արտադրանքը: Պայմանագրի մոտավոր արժեքը կազմում է 500.000 (հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար, որը մոտավորապես կկազմի շուրջ հինգ հարյուր հազար շիշ: Ապրանքները կմատակարարվեն մաս մաս (առանձին խմբաքանակներով)՝ ըստ պատվերի: Վճարումները ապրանքի դիմաց կիրականացվեն ապրանքը Բելառուսի Հանրապետությունից դուրս գալուց հետո 45 օրվա ընթացքում:

Բանակցությունների արդյունքում Ընկերությունը պայմանագիր է կնքել նաև Բելառուսի Հանրապետությունում Գոմել քաղաքում գտնվող «Գոմելի լիկյորների և օղիների գործարան» ՅՈՒԶ – ի (ԹՕՐ՝ “Абсолютные спирты”) հետ, ըստ որի կողմերի միջև կնքվել է ակտիվային խմիչքների մատակարարման պայմանագիր: Ըստ պայմանագրի Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ն պատրաստվում է Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծել նշված ընկերության արտադրանքը: Պայմանագրի մոտավոր արժեքը կազմում է 1.000.000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար, որը մոտավորապես կկազմի շուրջ մեկ միլիոն շիշ: Ապրանքները կմատակարարվեն մաս մաս (առանձին խմբաքանակներով)՝ ըստ պատվերի: Վճարումները ապրանքի դիմաց կիրականացվեն ապրանքը Բելառուսի Հանրապետությունից դուրս գալուց հետո 30 օրվա ընթացքում:

Ընկերությունը ներկայումս բանակցություններ է վարում Բելառուսի Հանրապետության Գոռոնո քաղաքում գտնվող «Գոռոնոյի լիկյորների և օղիների գործարան» ՅՈՒԶ – ի (ԹՕՐ՝ “Абсолютные спирты”) հետ, ըստ որի կողմերը պատրաստվում են ապրանքների մատակարարման պայմանագիր կնքել, որտեղ Ընկերությունը հանդես է գալիս որպես Գնորդ: Պայմանագրի այլ պայմանները դեռևս ճշտված չեն:

Տեղեկացնում ենք նաև, որ Ընկերությունը պատրաստվում է Բելառուսի Հանրապետության Մինսկ քաղաքում հիմնել Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի մշտական ներկայացուցչությունը: Ներկայումս Ընկերությունը ձեռնամուխ է եղել նախապատրաստական աշխատանքներ սկսելու այդ ուղղությամբ:

Գործադիր տնօրեն

07.08.09թ.

Ֆ. Ֆ. Հակոբյան